



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2018-19 ուստարվա բակալավրիատի ավարտական քննությունների և մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատում:
2. Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված՝ ֆակուլտետային միջոցառումների քննարկում:
3. Ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. ԵՊՀ և պատմալեզվագրական ֆակուլտետի 100-ամյակներին նվիրված միջոցառումների կատարման ընթացքը ֆակուլտետում:
5. Ընթացիկ հարցեր:

Ողջունելով գիտխորհրդի անդամներին՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով ամբիոնի վարիչները նկատեցին, որ 2018-19 ուստարվա բակալավրիատի ավարտական քննությունների և մագիստրոսական թեզերի թեմաներն ու դեկավարների ընտրությունը հիմնականում քննարկվել և հաստատվել են: Ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը, սակայն, ասաց, որ իր դեկավարած ամբիոնը չի շտապում հաստատել մագիստրոսական թեզերի թեմաները, քանի որ նախ՝ հարցին պետք է մոտենալ լրջորեն, և հետո՝ քննության ընթացքում պարզվում է, որ երբեմն տարբեր ամբիոնների թեմաները կրկնվում են: Ըստ պրոֆ. Յու. Ավետիսյանի՝ անհրաժեշտ է, որ ստեղծվի հատուկ հանձնաժողով, որը կհաստատի ամբիոնների ներկայացրած մագիստրոսական թեզերի թեմաները, որոնք, ի դեպ, ըստ օրենքի, կարող են հաստատվել մինչև տարեվերջ:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին ֆակուլտետային միջոցառումների քննարկմանը: Այդ առիթով հնչեցին մի շարք կարծիքներ, օրինակ այն, որ պետք է կապեր հաստատել Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի աշխատակազմի հետ, բացի այդ՝ անհրաժեշտ է բոլոր ամբիոնների մասնակցությունը. չէ՞ որ Թումանյանի ստեղծած գրական պատկանելի ժառանգությունը կարող է հարուստ նյութ տալ նաև լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող երեք ամբիոններին:

Պրոֆ. Ա. Ավագյանը հանձնարարեց երկշաբաթյա ժամկետում ներկայացնել որոշակի առաջարկություններ:

Օրակարգի **3-րդ հարցի՝** առիթով տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը: Նա մասնավորապես ասաց հետևյալը.

«Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի կատարած գործը հակիրճ և հստակ ներկայացնելու համար ընտրել ենք ներկայացումի հինգ հիմնական ոլորտ. *աշխատակազմ, գիտական մաս, կրթական մաս, ծրագրային մաս և առաջարկությունների մաս:*

Աշխատակազմ:

Ամբիոնի աշխատակազմը ունի երեսուներեք անդամ, որոնցից երեքը՝ դոկտոր, պրոֆեսոր, մեկը՝ դոկտոր, դոցենտ, քսանմեկը՝ դոցենտ, յոթը՝ ասիստենտ, մեկը՝ դասախոս:

Ամբիոնը ունի առկա ուսուցման երեք, հեռակա ուսուցման մեկ ասպիրանտ և մեկ հայցորդ:

Օրեր առաջ ամբիոնում աշխատանքի է անցել նոր գործավար՝ Քեսոյան Միրանուշը, մեր մագիստրատուրայի գերազանցիկ շրջանավարտներից է և այժմ նաև ամբիոնի ասպիրանտ: Նախկին գործավար Լիանա Սարգսյանը ամբողջությամբ անցել է դասախոսական աշխատանքի:

Գիտական մաս:

2018 թ. ամբիոնը հրատարակել է՝

- **երեք մենագրություն՝ Յակոբ Չոլաքեան՝** «Արեւմտահայերենի քերականութիւն» (կանոնակարգ եւ խնդիրներ, գիրք Ա, Երևան), «Գործնական արեւմտահայերեն» (Անթիլիաս), **Զարիկ Աղաջանյան՝** «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում»:

- **մեկ բառարան՝ Զարիկ Աղաջանյան՝** «Արդի հայերենի իմաստաարժեքային գուգաձևությունների բառաքերականական բառարան»:

- **բուհական մեկ դասագիրք՝** պրոֆ. **Ա. Սուքիասյանի** դասագրքի լրամշակված տարբերակը՝ «Ժամանակակից հայոց լեզու» (համահեղ.՝ Քնարիկ Սուքիասյան, Մանուկ Ֆելեքյան):

- **ուսումնական մեկ ձեռնարկ՝** «Հայոց լեզվի ուղեցույց» (հեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան): Հրատարակվել է Գիտության պետական կոմիտեի երկամյա թեմատիկ ծրագրի իրականացման շրջանակներում:

Ամբիոնի ներկայացրած նոր գիտական թեման («Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ») այս տարի նույնպես արժանացել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման:

Քննարկման ընթացքի մեջ են երկու մենագրություն՝ «Ժամանակակից հայերենի կետադրությունը» (հեղ.՝ **Յուրի Ավետիսյան**) և «Անորոշ դերբայը ստորոգյալի կազմում («Եղանակավորող + ԱԴ կառույցը»)» (հեղ.՝ **Զարիկ Աղաջանյան**):

Ամբիոնի երեք դասախոսներ ստացել են դոցենտի գիտական կոչում (Անաիդա Մովսիսյան, Լիանա Սարգսյան, Արևիկ Բամալյան):

Ամբիոնի դասախոսները մասնակցել են համալսարանական և հանրապետական գիտաժողովների, տպագրել են **չորս տասնյակի հասնող** գիտական հոդվածներ:

Սույն թվականի նոյեմբերին հայոց լեզվի ամբիոնը հայոց լեզվի պատմության ամբիոնի հետ համատեղ կազմակերպելու է «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական հերթական գիտաժողովը:

Կրթական մաս:

Երկրորդ տարին է՝ բակալավրատի երկրորդ կուրսում գործարկվում են ամբիոնի մշակած երկու նոր դասընթացներ՝ *Տեքստի խմբագրում և ստեղծագործական մշակում; Գործնական հաղորդակցման հմտություններ և խոսքային էթիկետ*: Դրանք ոչ միայն գրավիչ են դարձնում ֆակուլտետի կրթական ընդհանուր ծրագիրը, այլև պայմանավորում են գործնական կարևոր արդյունքներ: Կարծում ենք, որ ճիշտ կլինի դրանց մատուցումը տեղափոխել բարձր կուրսեր՝ չորրորդ կամ գոնե երրորդ կուրս:

Ամբիոնը նախատեսում է բակալավրատում գործող «Թարգմանչական գործ» մասնագիտացման հիմքի վրա գալիք ուսումնական տարում «Հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ընդհանուր ծրագրից առանձնացնել «Թարգմանչական գործ» մագիստրոսական նոր ծրագիր:

Ասեմ նաև, որ ամբիոնը այս տարի նույնպես կարողացավ իրականացնել իր հիմնական մագիստրոսական ծրագիրը. ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսում գրանցվել են 22 մագիստրանտներ:

Ամբիոնը դասախոսությունների շարք է պատրաստում իրավաբանական դաշտի համար. սկսել ենք Վերաքննիչ դատարանի աշխատակիցներից, իսկ եկող տարի առանձին դասընթաց կկարդացվի ակադեմիայում:

Ծրագրային մաս:

1) Պետք է ավելի գրավիչ դարձնել ամբիոնի կողմից մատուցվող դասընթացների բովանդակությունը և թարմացնել մատուցման ձևերը՝ ներգրավելով տեխնիկական միջոցներ: Դասընթացների բովանդակությունը բակալավրատում ուղղորդել առավել գործնական անհրաժեշտ նյութի ուսուցմանը, մագիստրատուրայում ներառել նոր նպատակային դասընթացներ:

2) Ստեղծել ձեռնարկ *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա* առարկայի համար, գործնական աշխատանքի ձեռնարկ բանասիրության ֆակուլտետի *Ոճագիտություն* դասընթացի համար, *Խոսքի մշակույթի* տեսա-գործնական ձեռնարկ բնագիտական ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների համար:

Առաջարկությունների մաս:

ա) Քննարկել մագիստրոսական թեզերի հաստատման նոր կարգի գործարկման հնարավորությունը. հարցի կարևորությունը շեշտելու և թեմաները արդիականացնելու և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակամիտումով թեզերի թեմաները ամբիոններում քննարկելուց հետո ներկայացնել ֆակուլտետի մեթոդխորհրդին, որը համապատասխան կարծիքով և երաշխավորությամբ դրանք կներկայացնի ֆակուլտետի գիտխորհուրդ՝ հաստատման:

բ) Ուսանողական պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնելու նոր սխեմաներ մշակելու համար մեթոդխորհրդին առաջակել անցկացնել մշտադիտարկում և պրակտիկայի արդյունքներն ու հետևանքները ներկայացնել խորհրդի քննարկման: *Արդեն իսկ ահագանգեր կան.... Պետք է տրամադրի մեկ ամսվա ընթացքում մոտ 150 ժամ՝ 22 օր, օրը՝ 8 ժամով: Բանիմաց, փորձ ունեցող մասնագետների նշանակել դեկավար:*

գ) Առաջակել մեթոդխորհրդին մագիստրատուրայում դասավանդման որակի և արդյունավետության, ինչպես նաև ուսումնառությունից մագիստրանտների բավարարվածության վերաբերյալ անցկացնել հարցումներ և արդյունքները քննարկման ներկայացնել ֆակուլտետի գիտխորհուրդ:

դ) Ընթացիկ քննություններին հատկացվող մեկ շաբաթը, իհարկե, սեղմ ժամկետ է, բայց պիտի ջանալ, որ ուսանողները հնարավորություն ունենան մեկ օրում հանձնելու առավելագույնը երկու քննություն: Միաժամանակ քննության անցկացման համար պիտ ջանալ ապահովել մեծ՝ լայն և արձակ լսարաններ»:

Գիտխորհուրդը ժամանակակից հայոց լեզվի տարեկան կատարած աշխատանքները բաց քվեարկությամբ համարեց միանգամայն դրական:

Օրակարգի **4-րդ հարցի** առիթով (ԵՊՀ և պատմալեզվագրական ֆակուլտետի 100-ամյակներին նվիրված միջոցառումների կատարման ընթացքը ֆակուլտետում) ելույթ ունե-

ցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա նշեց, որ այդ առիթով պարբերաբար զրուցում է ամբիոնների վարիչների հետ, այս պահին ընթանում են աշխատանքները, որոնք բավարար են:

Ընթացիկ հարցերում

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Միրանուշ Էդուարդի Կեսոյանի** ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ Միրանուշ Կեսոյանը 2018 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (առկա ուսուցում)՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01):

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Միրանուշ Կեսոյանի** ատենախոսության թեմա հաստատել «Ներակայումը արդի հայերենում» (Ժ. 02. 01 «Հայոց լեզու»):

2. Միրանուշ Կեսոյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. Պ., պրոֆ. **Յուրի Ավետիսյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Անուշ Անդրանիկի Խաչատրյանի** ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ Անուշ Խաչատրյանը 2011 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, 2018 թ. հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (առկա ուսուցում)՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ. 02. 01):

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Անուշ Խաչատրյանի** ատենախոսության թեմա հաստատել «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառապաշար և քերականական իրողություններ)» (Ժ. 02. 01 «Հայոց լեզու»):

2. Անուշ Խաչատրյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. Պ., պրոֆ. **Ռուբեն Սաքապետոյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ, ԳՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ **Հռիփսիմե Արայի Զաքարյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում»՝ Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել **Հռիփսիմե Զաքարյանի** ատենախոսության թեման՝

1. «Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում».
2. Գիտական ղեկավար՝ Բան. գիտ. դոկտ., պրոֆ. **Կիմ Աղաբեկյանին**:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ